


ՀԱՎԵԼՎԱԾ



ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I ՀԱՐՄԱՆԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ ՈՒ ԾԻՍԱԿԱՆ ԵՐԳԵՐ

1. 2. 3. Հարստեցեալն ճախանկազ

Նորապսակներն պսակի նախօրյակի գիշերը տղայի հարազատները, երաժիշտներն հետ միասին, դնում են կնքահոր տուն (կնկըհար առնելու)։ Այնտեղ հյուրասիրվում, զվարճանում են և որոշ ժամանակից հետո կնքահորն ու կնքամորն իրենց հետ առնելով, կառքերով վերադառնում են տղայի տուն։

Կնքահոր ու կնքամոր զալուց հետո, տղայի տանը սկսվում է հարսանյաց հանդեսը։ Այս նախանվագները կատարում են ի նշան հարսանյաց հանդեսի բացման և կոչվում են «հարսնիք պաշլայված հավաներ», այսինքն հարսանիքն սկսելու եղանակներ։

4. 5. Հարսին ճոր տնից դուրս բերելու եղանակ (Ա լ—Գ է լ ի ց)

Այս եղանակը կոչվում է «Ա լ—գ է լ ի ց»։ Զալթում այգ բառը բացատրում են որպես «Առին կելլին», այսինքն հարսին առին ու դուրս են ելնում։ Այս եղա-

նակը սովորաբար նվագում են դռան շնմին, նորապսակներին հարսի հոր տնից դուրս բերելու ժամանակ։ Սա ևս տրված է երկու տարբեր եղանակներով։

6. 7. 8. 9. Մոմ խաղցնելու եղանակ

Նոր նախիջևանցիների հարսանեկան ծեսերից մեկն էլ հարսին հինալու (զուլիսը հինա դնելու) ծեսն էր։ Պսակի նախօրյակին փեսայի տնից հարսի տուն են բերում ժապավեններով զարդարված երկու մոմ և հինա։ Այժմ հինայի փոխարեն բերում են օգեկոլոն։

Հարսնացուի հայրը, մայրը և մոտ ազգականները իրենց կանանց հետ միասին հերթով զուլգ-զուլգ մոմ են խաղացնում։

Մոմ խաղացնելու հատուկ եղանակներ կան, որոնք կոչվում են «մոմ խաղցնելու հավաներ»։

Երաժիշտները նվագում են այգ եղանակներից որևէ մեկը։ Այս ու կին, մեկը ձեռքին մոմեր բռնած, մյուսը՝ հինան, դեմ առ դեմ կանգնած, հենց տեղում ձեռներն աշ ու ձախ շարժելով, մոմերն են խաղացնում։ Հետո մոմերն հանձնում են հետևյալ զուլգին։

Երաժիշտները նվագում են պարեղանակ ու զուլգները հերթով պարում են։

Մոմ խաղացնելու սովորությունը քաղաքում վաղուց մոռացվել է, իսկ որոշ գյուղերում դեռ պահպանվում է։

10. 10a—Ջուլբիլմե

Այս եղանակը նվագում են նորապսակներին փեսայի տունը բերելուց հետո։

Կնքահայրը, որ կնքամոր հետ նստած են լինում ամենապատվավոր տեղում, իր մոտ է հրավիրում նորապսակներին, փեսայի ծնողներին և նրանց ամենամոտ ազգականներին ու բաժակներով զինի մատուցում բոլորին։

Հարսն ու փեսան, ի նշան հարգանքի, համբուրում

են կնքահոր ու կնքամոր ձեռքը կամ ձեռք են տալիս նրանց։ Մյուսներն էլ «Պսագովներով» ծերանան, «գնքահար վարձքդ զազարա ասելով, խմում են զինին։ Այդ ժամանակ է, որ նվագում են «Ջուլբիլմե» եղանակը։ Սրան հետևում է մի աշխույժ ընդհանուր պարեղանակ ու բոլորը պարում են։

Այնուհետև կնքահոր առաջարկով պարում են հարսն ու փեսան։

11. Լուսն ալ լուսացավ

(Հարսն առի պար)

«Լուսն ալ լուսացավ»-ը հարսնառի պար է։ Սրա մասին Ե. Շահազիզը իր «Նոր-Նախիջևանը և Նոր-Նախիջևանցիք» աշխատության մեջ տալիս է հետևյալ բացատրությունը։

«...Գյուղերում մինչև ցայսօր դեռ պահպանվել է փեսային զգեստավորելու, հարսնառ դնալու և պսակի երթալու միջոցում «պարեր» երգելու սովորությունը, որոնց բառերը և ոճերը ժողովրդի բերանում ներկա-

յումս դժբախտարար այնքան աղափաղվել են, որ համարյա չեն անկարելի է դարձել վերականգնել նոցա իմաստը, հասկանալ նոցա բովանդակությունը։ Հարսնաւ ևրթալու ժամանակ, երբ հասնում են

հարսի տան դռան շնորհիւ, երգում են «*ուսա ալ լուսացալ*» և այլն։
Սրա հետ միասին է. Շահադիդը տալիս է նաև այս պարի տեքստը, որը ամբողջովին համընկնում է մեր տեքստի հետ։

12. Հինա դըրին

Պսակի նախօրյակին աղջկա ընկերուհիները, գլուխը հինայելուց հետո, հարսնացուին բերում նստեցնում են սենյակի մեջտեղում դրված սպիտակ բարձով աթոռի վրա ու իրենք էլ նրա շուրջը պտույտ գալով, երգում էին «*Հինա դըրին*» երգը։

Աղջիկներին ամեն մեկը մոտենում է հարսնացուին, մատը թաթախում հինայի մեջ, նախ քան հարսի մաղբրին և ապա իր մաղբրին, որպեսզի ինքն էլ արժանանա այդ օրվան։

Այնուհետև հարսնացուի գլխին հարսանկան բոդր ղցելով, տանում կտնդենցնում են նրան սենյակի մի անկյունում։

Այս սովորությունը գոյություն ունի և այժմ, սակայն հինան փոխարինում են օգեկոնոնով։

Ծրդի փոխարեն այժմ նվագում են միայն եղանակու, Ստորև բերում ենք «*Հինա դըրին*»-ի տարբերակը, որը փոքր-ինչ տարբեր է առաջինից։

106

ՀԻՆԱ ԴԸՐԻՆ (սուրբերակ)

$\text{♩} = 80$

Հի - ցա դը - ռից բաղ - սիք դա' - ռից. գիլ - ֆիվ մա - զըս

փեր - չամ ա - ռից, գուլ - խուս ալ փո - շի գա - բե - ցից

բե - ռից քո - շամ գայ - ցե - ցու - ցից: Սի - ռա - գամ

քու - ռիգ - ցեր դա - ու - սը ձե - զի:

14. 15. Ա վ ե ա ի ս

«*Ավետիսը*» երգում էին Քրիստոսի ծննդյան տոնի ճրագալույցին, Այդ երեկոյան, երիտասարդները անցնում էին տնից-տուն, կանգնում պատուհանների տակ ու «*ավետիս*» երգում։

1906 թվականին Չալթր գյուղում, ավետիս երգելու ժամանակ, սպանել էին մի երիտասարդ կատարողի, որից հետո տեղական իշխանությունը արգելեց նրանց կատարումը։

Ավետիսները լինում են մեծ և փոքր, որոնք տարբերվում են միմյանցից թե տեքստով և թե եղանակի կառուցվածքով, թե մեծ և թե փոքր ավետիսները զանազան գյուղերում երգվում էին տարբեր տեքստերով։

Այդ տարբերակներից է հանդիսանում նաև Չալթր գյուղի փոքր ավետիսի տեքստը, որը երգվում է միևնույն եղանակով։

II. ԿՆՆՑԱՂԱՅԻՆ ԵՐԳԵՐ

16. Ախշգո տաճառ

«*Ախշգա տաճառ*»-ը փոքր երեխային՝ աղջկանը խաղացնելու երգերից է, որը սովորաբար կատարում են մայրերը երեխային վերվեր թացնելիս։

20. Հավի օիվ


«Հավի շիվ»-ը մանկական խաղերի է, որին երբեմն մասնակցում են նաև մեծահասակները: Երկու կամ մի քանի հոգի կողք-կողքի նստելով, մեկ ձեռքի բութամատով ու ցուցամատով բռնում են իրենց մյուս ձեռքի կամ կողքին նստածի ձեռքի դաստակի մաշկը: Սա ևս իր հերթին նույն ձևով բռնում է մի երրորդ խաղակցի ձեռքը և այսպես, երգի ու թմբիկ ընթացքով, ձեռքերը վեր ու վար շարժելով, երգում են: Քըռ, բաբային էջթիկը» խոսքերի հետ միասին, որը կատարվում է ութմիկ արտասանությամբ, միայն առանց եղանակի, ձեռքերը բաց են թողնում ու թափահարելով վեր են բարձրացնում ի նշան թռչելու:

22. Բարայիս գասիմ

Այս եղանակը կատարվում է նաև 7/16-ական չափով, այսպես՝

105

ԲԱԲԱՅԻՍ ԳԱՍԻՄ



բա - բա - յիս գա - սիմ ձե - ձե՛լ գու-դամ:


24. Երեք օրվան լուսնի նման

«Երեք օրվան լուսնի նման» երգի տեքստը տպագրված է Գ. Չախուշյանի «Հացի կտոր դեյթունցուն» գրական ժողովածուի մեջ: Տեքստի հեղինակը նոր նախնական աշուղ Աղաբալին է: «Երեք օրվան լուսնի նման ունքձրդ» երգվում է նաև 3/4 չափով և քիչ տարբեր մեղեդիով: Այս եղանակը երգվում է նաև մի ուրիշ տեքստով, որը կոչվում է «Ախ, Հայկանուշ»: Ստորև բերում ենք այդ երկու երգերը:

106

ԵՐԵՔ ՕՐՎԱ ԼՈՒՍՆԻ ՆՄԱՆ

ՀԱՆԳՈՒՄՑ-ՉԱՓԱՆՈՐ $\text{♩} = 132$



ՀԱՆԳԻՄՅ-ՁԱՓՈՒՂՈՐ 132

պա - րակ մեջ - քով. էր - գաց քո - յով

ձի - դաց - իս գըդ - րիջ-ճե - րուց խել - քը գու-լուխեց

գը - դա - Յիս, լուս-ճից - գա լուս էր քո - վըս է - կած

գի - շե - րըդ, վարթ պաց-վիլ էր գար-միր, ջեր-մագ քու-շե - րըդ:

26. Արզու, Խամբեք

(Արբուշան)

«Արու, Խամբեր»-ը կամ «Ապրողանը» գուգերգ է աղջկա ու տղայի հարց ու պատասխանի ձևով կա-
ռուցված: Սա նույնպես բերվել է Ղրիմից և նոր նա-
խիջևանցիների հանրածանոթ ու սիրված երգերից է և
մինչև այսօր էլ կատարվում է ամեն մի խնջույքում ու
հավաքույթում:

Սա այն հանրահայտ սյուժեներից է, որին հաճախ
կարելի է հանգիստի հայ ժողովրդական երգերում:

Այսպիսի երգերի թվին են պատկանում «Յալուխս
կորավ ձեր գուռը», «Ջիմ վզին» և ուրիշները:

Այս երգը ոգևորել է մի քանի հայ երաժիշտների,
որոնք տարբեր ժամանակներում մաշկել են այն բազ-
մաձայն երգեցիկ խմբի համար: Դրանց թվին են պատ-
կանում շուքակահար Դավիթ Սողոմոնյանը, Երվանդ
Սահառունին, Մկրտիչ Լյուկեճյանը:

27. Մույլ աղջկա երգը

Վ. Սվազյանը գրում է, որ այս երգը տարածված է
նաև Հայաստանում և այստեղ աղջիկը հոր առաջա-
գրած բոլոր փեսացուներից նախընտրում է զուտնա-
շուն:

Մեր տեքստը իր բովանդակությամբ տարբերվում է

նրանով, որ զուտնաշուն այստեղ փոխարինում է հար-
մոնահարը (վառդանջին): Մ. Մանուկյանը ձայնագրած
ունի այս երգի մի այլ տարբերակը, որը նա գրի է
առել նույնպես Չալթր գյուղում: Նրա եղանակը փոքր-
ինչ տարբերվում է մեր ձայնագրածից:

108

Բա-բա տուց իճ - ձի ո-րից քի-դի դաս. բա-լամ ես քե-զի

սա-բաց - ջի - ի կու-դամ, բա-բա ես սա-բաց - ջի - ի չիմ էջ-թալ:

28. Փողոսեոս երիտասարդի երգը

Ս. Շահադիդը իր այդ նույն ժողովածուի մեջ Նոր տեսքն ու գեղեցկությունը... բնութքն ու մարիֆեթը, նախընտանի անցյալի ամուսնությունների մասին գրելով, ասում է, որ այդ ամուսնությունները «...մեծ մասամբ հաշվի ու գործնական դիտումների արդյունքն են: ...Քաղաքում ոչ մի բանի չեն նայում, մինչև իսկ տեսքն ու գեղեցկությունը... բնութքն ու մարիֆեթը, գիտությունն ու կրթությունը բանի տեղ չեն գնում»:

30. Սամավարի երգը

Սամավարի երգի տեքստը ևս տպագրված է Գ. Զալ-կան ժողովածուի մեջ: Այս տեքստի հեղինակը ևս խուշյանի խմբագրած «Հացի կտոր դեթոնցուն» գրա-նոր նախընտանի աշուղ Աղաբալին է:

31. Հենդեբե ինգա

«Հենդեբե ինգա»-ն Ղրիսից բերված երգերից է, որը շատ տարածված է Նոր նախընտանում: Այս երգի բառերը ևս դրի է առնված Ծ. Շահադիդի կողմից ու դետեղված է նրա «Նոր նախընտանը և նոր նախընտան-ցիք» աղագրական ժողովածուում:

109

Հենդեբե ինգա

(Տ ա ր բ ր ա կ)

Գլորվեցա, ղլորվեցա հենդեք ինգա,
Հենդեքին մեյնն սանդըռ գտա,
Սանդըռը դարի, յանկայիս դուլի,
Ցանկաս ինձի բուլիճ դուլիցի,
Բուլիճը դարի, շոբանին դուլի,
Չորանը ինձի խուղի դուլիցի,
Խուղին դարի աղայիս դուլի,
Աղաս ինձի չալ ձի դուլիցի:

Զալ ձին հեճա Ղարասու գնացի,
Վեր նայեցա-թաթավ կուկար,
Վար նայեցա-սել կըլազերի,
Էրգու ախար տինախ կըրոնեյին,
Էրկու քուր ալ սելը գըանեյին:
Մեձին գեսա բարև դուլի,
Փոքրին գեսա մայիլ էղա,
Առանց ստագի խայիլ էղա:

32. Գըլդըմ Խուշերես

«Գըլդըմ» կատակի արտահայտության մի ձև է, հա-լերեսը՝ տղամարդու առնուն է:
«Գըլդըմ Խուշերես»-ը ունի և ուրիշ տեքստ.
Գըլդըմ, գըլդըմ, Խուշերես,

Մորին կեշթա փադ չի կա,
Դունը կուկա հաց չի կա,
Պրինձ-փիլաֆին եղ չի կա,
Խնամիններուն դեղ չի կա:

33. Արիցեբ, աղաբ

Նոր նախընտանի յոթ եկեղեցիներից մեկն էլ ս. Գևորգի անվան եկեղեցին էր, որը Դոնի ափին ապ-րող հայերի ամենահարգված ուխտատեղիներից էր համարվում:
Մինչև խորհրդային կարգերը, ամեն տարի, ապ-րիլի 23-ին (հին տոմարով) տոնվում էր ս. Գևորգի տոնը:
Տոնի նախօրյակին շրջակա հայ գյուղերից կա-

նայք ու աղջիկները մերկ ոտքերով, շատերն էլ մա-տաղացու դառներն ուներին դրած, քաղաք էին գալիս:
Ապրիլի 23-ին, վաղ առավոտյան, ուխտատեղին լցվում էր հարյուրավոր կառքերով և մարդկանց հորդ անցուղարձով: Երիտասարդներն այստեղ իրենց համար հարսնացու էին ընտրում, իսկ նշանվածներն էլ հանդի-պում էին իրենց ընտրյալների հետ:

Այդ ուխտը կոչվում էր «Խրդընդեզ» կամ «Խրդուել-լու»։ Այս երգում նկարագրվում է, թե ինչպես ուխտա-տեղում երիտասարդները հետապնդելիս են եղել քողա-վոր մի աղջկա և պատկերացնելով նրան մի զեղեցիկ էակ, բուռն ցանկություն են ունեցել տեսնելու նրա

դեմքը։ Նրա քամու սարուքերումով քողը հեռացել է ու երեսը բացվել, տենչալի զեղեցկության փոխարեն տե-սել են ծաղկատար դեմքով մի տղեղություն ու խիստ հիասթափվել։

36. Գնացե՛ք ասե՛ք բարայիս

Վ. Սվազյանը իր հողվածում գրում է, որ այս երգի բովանդակությունը հեռավոր կերպով հիշեցնում է հայ ժողովրդական «Ասլան աղա» վիպերգը։

38. Խաբիր Մելքոն

«Խաբիր Մելքոն» երգի մեջ նկարագրվում է Նոր Նախիջևանի հայերի Մշո ս. Կարապետ ուխտ գնալու դեպքերից մեկը։

Չնայելով որ Նոր Նախիջևանցիների նախնիները դեռ դարեր առաջ գաղթել ու հեռացել էին մայր հայ-րենիքից, բայց ս. Կարապետ ուխտ գնալու սովորու-թյունը պահպանվել էր մինչև 19-րդ դարի վերջերը։ Նրանք խմբերով, ձի հեծած, ճամփա էին ընկնում, և ամիսներ էր տևում, մինչև հասնում էին ուխտատեղին։ Ս. Կարապետ էին գնում նաև նշանված կտրիճները իրենց «մուրազին» հասնելու համար։

Խաբիր Մելքոնը ևս այս կտրիճներից էր, սակայն

յոթ տարի էր արդեն, ինչ նա հիվանդ էր և չէր կարո-ղանում իր իղձն իրականացնել։

Չնայած իր այս հիվանդ վիճակին, օրերից մեկ օր, նա որոշում է մի խումբ կտրիճների հետ մեկնել դե-պի ս. Կարապետ։ Հասնում են Թիֆլիս, Մելքոնը մա-հանում է։ Մեռնելուց առաջ նա կտակում է, որ իր ձին տանեն ս. Կարապետի դռանը կապեն։

«Խաբիր Մելքոնը» Նոր Նախիջևանի գյուղացիների սիրած երգերից մեկն է։

Ստորև բերում ենք այս երգի տարբերակը, որը ավելի ջատ կատարվում է Զալթր գյուղում։

Այս երգի տեքստը ևս դրի առած ունի Ս. Շահադի-րը, որը տպագրված է նույն աշխատության մեջ։

118

ԽԱՐԻԲ ՄԵԼՔՈՆ

Ճառքիով

ՄԱՆՐ $\text{♩} = 84$

Օի - տը դա - ռի ցավ քա - շիւ էր

խա - ռիբ Մել - քո - նը.

սուրփ Գա - ռա - բեդ ուխտ - ա - ռիւ էր

խա - ռիբ Մել - քո - նը.

39. Շաբեցին մուրա

Այս երգը ժողովրդական հանրահայտ մի հեքիաթի կամ դրույցի հատվածներից է։

Այսպիսի մի ժողովրդական զրույց լափածոյով դրած ունի Սողոմոն Տարոնցին «Ազնավը» վերնադրով, որը լույս է տեսել 1941 թ. Նրևանում։

Ահա նրա բովանդակությունը.

Մի բռնակալ թագավոր պալատ է կառուցելիս լի-նում, սակայն կառուցումը զարմանալի ձևով ձախող-վում է։ Պատերը ջարում են ու ջարում, բայց հաջորդ օրը դալիս տեսնում են փլված. և այսպես ամեն օր։

Մի կախարդ կին խորհուրդ է տալիս պատի մեջ նորատի ջահել աղջիկ դնել։ Թագավորը խոստանում է

այսպիսի մի աղջկա վաճառողին մի քաջ ոսկի նվիրելու
Շահամու մի շաք կին իր քրոջ որը աղջկան վա-
ճառում է թագավորին:

Աղջկան ուժով դնում են պատի մեջ ու շարում:
Երբ շարվածքը հասնում է շրթունքներին, և աղջիկը
արձագանք չի գտնում իր աղերսներին և աղաղակներին
ու դգում է իր մահը, անիծում է մորաքրոջը, ասելով.

40. 41. 42. Վիշալ Աստվածածնին երգույթերին և Բսամնգս գոյնեցի.

Ռուսաց Եկատերինա 2-րդ կայսրուհին Ղրիմից
Դոնի ափ գաղթեցրած հայերին իր հատուկ հրովար-
տակով մի շարք արտոնություններ շնորհեց: Այդ ար-
տոնություններից մեկն էլ զինվորագրությունից ազատ
մնալն էր: Բայց դեռ մեկ դար շանցած, կայսրուհու
հաշորդները այդ հրովարտակի շատ կետերը չեղյալ
համարեցին և 1874 թվին, Ալեքսանդր 2-րդի օրով,
ևկսեցին հայերից էլ զինվոր վերցնել:

Երիտասարդների ռալգաթ գնալը՝ դառնում է ող-

բերական գառնաս, շար մորաքույր... և մորաքույրը
դառնում է ագալ:

Մոտավորապես այս միտքն է պարունակում նաև
Դավիթ Ծոնկաձեի «Մուրամի բերդը»:

«Շարեցին մորքուր» երգի մեջ տրված է մորա-
քրոջն ուղղված աղջկա աղերսանքը:

Բերդություն: Այս երգերում նկարագրվում է հայ զինա-
կույիկների ծանր կացությունը:

«Քսանմեզս գոյնեցի» երգը հորինված է 1874 թվին,
առաջին անգամ հայերին զորակույելու առթիվ:

Այս երգի տեքստը ևս զրի է առնված Երվանդ Շա-
հադիդի կողմից ու զետեղված նույն աշխատության մեջ:
Երգն ունի տեքստի նաև մի այլ տարբերակ, որ կոչվում
է «Առջի սալդաթի երգը»:

Ահա այդ տարբերակը:

ԱՌՋԻ ՍԱԼԴԱԹԻ ԵՐԳԸ

(Տ ա ր ք Ե ր ա կ)

Օրեն առաջ կիր էգավ,
Աշխարհներս մթնեցավ,
Օֆ, օֆ, օֆ հայրիգս,
Ծավ քաշիլ էր մայրիդս:
Դարին ստանոք խոթեցին,
Լանքերս, բուերս լափեցին,
Օֆ, օֆ, օֆ հայրիգս,
Ծավ քաշիլ էր մայրիդս:

Հայի շեքմենս հանեցին,
Սալդաթի շինել հաքուցին,

Քսանմեզս գոյնեցի,
Հորս, մորս լացուցի,
Օֆ, օֆ, օֆ հայրիգս,
Ծավ քաշիլ էր մայրիդս:
Օֆ, օֆ, օֆ հայրիգս,
Ծավ քաշիլ էր մայրիդս:

Թութու բոռչով արիշ հաց,
Ե՛րբ բիգ մոռնամ շերմագ հաց,
Օֆ, օֆ, օֆ հայրիգս,
Ջի կա մեղի աղադում:

43. Բայձառ Դաղա՛

Նոր նախիջանում, քաղաքի կենտրոնում կանգ-
նած էր Գրիգոր Լուսավորչի անվան մայր եկեղեցին.
այդ փողոցն էլ նախիջանցիք անվանում էին ռուսա-
վորչի սոխախա:

Եկեղեցու դիմաց 20—25 մետր հեռավորության
վրա կանգնեցրած էր Եկատերինա 2-րդ կայսրուհու
արձանը, որի երեսը դարձրած էր դեպի Ռուստով, իսկ
ետևը՝ դեպի Լուսավորիչ եկեղեցին:

Այս արձանը կանգնեցված է եղել քաղաքազուրու-
Մինաս Բալաբանովի կողմից:

Երգում գովաբանելով ն. նախիջանը իրրև գեղե-
ցիկ, բարեկարգ քաղաք, որը աչքի է ընկնում իր
բարձր, աղյուսակերտ շենքերով ու այլ կառուցվածքնե-
րով, միաժամանակ և հանդիմանում են Մինաս աղա-
յին, Եկատերինայի արձանը եկեղեցուն ետևով կանգ-
նեցնելու համար:

III. ՊԱՐԵՂԱՆԱԿՆԵՐ

Ա. Կանանց զույգ պարեր

Կանացի զույգ պարերը ընդհանուր անվամբ կոչ-
վում են «Բոհդան հավաներ»:

Սրանց թիվը բավական շատ է, և եղանակները
իրենց առանձին անունները չունեն:

Այս եղանակների համար բնորոշը համաչափ
տեմպն է:

Սովորաբար «Բոհդան հավա»-ներին հետևում են
աշխույժ պարեղանակներ:

44. Պարային ճախանվազ

(օ յ ի ն հ ա վ ա)

Երիտասարդ աղջիկներն ու կանայք Նոր նախիջա-
նում և շրջակա գյուղերում պարում էին երկուսով դեմ
դիմաց կանգնած:

Ձուլգերից նախ մեկն էր պարում, իսկ մյուսը տե-
ղում կանգնում, ապա մյուսը պարում, առաջինը կան-
գնում:

Ամեն մի առանձին զույգի պարին նախապատրաս-
տելու համար նվագում էին հատուկ մի եղանակ, որ
կոչվում էր «օյին հավա»: Սրանից հետո սկսվում էր
բուն պարեղանակը, ու նրա հետ միասին նաև պարը:
Թեպետ այդ զույգ պարերը կատարվում են և այժմ ու
մեծ մասամբ գյուղերում, բայց նրանք կատարվում են
առանց «օյին հավա»-յի, այսինքն՝ առանց նախանվագի:

Ռ. Ընդհանուր պարեր
(հոռոն հավաներ)

Նոր նախիջևանի և դյուղերի ժողովրդական պարերի մեջ մեծ տեղ էին զբաղում նաև կլոր կամ շուրջպարերը, որոնք կոչվում էին «խոռոն» կամ «խորան բռնված հավաներ»:

Այդ պարերը բնիկ նախիջևանցիների մոտ գրեթե մոռացված են, սակայն որոշ դյուղերում նրանք դեռ շարունակում են պահպանել իրենց դյուղայինը:

IV. ԽԱՌՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ

84. Հավալան մեղեդի
(Չ Բ Ե Լ Ե Կ Ե Լ Ե Կ Ե Լ)

Հովիվը կորցնում է իր հորը և հուսահատվելով վերցնում է սրինգն ու սկսում նվագել Չորան հավալ: Հանկարծ հեռվում ստվերներ է նկատում ու հետզհետե արագացնում է նվագած հղանակի տեմպը: Եվ հոր

վերջնականապես գտնում է ոչխարներին, այնքան արագացնում է տեմպը, որ հղանակը ստանում է աշխույժ պարի բնույթ, ու ինքն էլ ուրախությունից սկսում է պարել:

85. Զեւմակ մայմուռ


Այս հղանակն առաջնորդում է կոչվել ճերմակ վայմուռ: Այժմ այն հայտնի է Ղրիմի նանիկ անվամբ:

Ստորև բերում ենք ճերմակ մայմուռի Ն. Նախիջևանի տարբերակը:

111

ԶԵՐՄԱԿ ՄԱՅՄՈՒՐ
(Նոր-Նախիջևանի տարբերակ)

ՇԱՆՐ Ժ. = 84



89. Բաղ ու բաղձա


Ստորև բերում ենք նաև այս եղանակի Ն. Նախիչևանի տարբերակը:

102

ԲԱՂ ՈՒ ԲԱՂԶԱ

(Նոր-Նախիչևանի տարբերակ)

ՇԱՆՐ ♩=120



90. Ա ս ե ի

Տեղացիների պատմելով Հայաստանից եկած մի չքավոր մարդ է լինում, որը բնակություն է հաստատում Չալթր դուղում ու ապրում մի հարուստ դուղացու տան դիմաց: Նկվորը շատ գործածելիս է եղել թասեցիք բառը իսկ հարուստ հարևանը միշտ ծաղրելիս է եղել և անվան փոխարեն աղքատ հարևանին կոչել է թասեցիք:

Այս առթիվ հայաստանցին հորինել է մի եղանակ, նվագել դրացուն ու ասել թևյա եղանակը թող կոչվի թասեցիք, դու հարուստ ես և ունիս միայն հարստություն, և քո մահից հետո դու շուտով կմոռացվես, իսկ թևյանինք-ը կապրի շատ երկար:

Այստեղից էլ այս եղանակի անունը մինչև այժմ էլ մնացել է թևյանինք:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐ ՄԱՍԻՆ

1. Լւանջան Բաղդասար. 74 տարեկան, հաշվապահ, Մեծ Սալա գյուղից, ապրում է Ռոստովում: Կատարել է № 80 պարեղանակը:
2. Բաղանջան Սանակ. 58 տարեկան զուռնաչի. Չալթր գյուղից, ապրում է Չալթրում: Կատարել է 68 և 70 պարեղանակները:
3. Գուռայան Խաչեղբայր. 33 տարեկան, երգի ուսուցիչ. Չալթր գյուղից, ապրում է Չալթրում: Կատարել է 54 պարեղանակը և 74 Հարությունցի:
4. Թվմաշյան Մարտիրոս (Թվմաշով). 63 տարեկան, հարմոնահար, Ն. Նախիջևանից. ապրում է Ռոստովում: Կատարել է 85. Զերմակ մայմուտ, 103. Տեր Ակորին ճամլը օդան և 89 Պաղ ու պաղլա եղանակի տարբերակը: (Տե՛ս ծանոթագրություն 89):
5. Թախթամիշյան Լուսավառն. 41 տարեկան, պաշտոնյա. Չալթր գյուղից. ապրում է Չալթրում: Կատարել է 40. Վիշապ, 41. Աստվածաձենին էրզուշաթին, 97. Խաթուն հարսը և 24. Երեք օրվան լուսնի նման եղանակի տարբերակը: (Տե՛ս ծանոթագրություն 24, «Ախ, Հայկանուշ»):
6. Թախիկյան Անդրանիկ, 56 տարեկան, զուռնաչի, Չալթր գյուղից, ապրում է Չալթրում: Կատարել է 18. Նանիդ, 82. պարեղանակ, 84. հովվական մեղեդի, 99. Օլտանին Խաչատուրին հավան, 100. Բառաշին Օվակեմին հավան և 102. Օլանին պաղլան:
7. Լյուկենյան Աստղիկ. 40 տարեկան. պաշտոնյա, Չալթր գյուղից, ապրում է Չալթրում: Կատարել է 36. Կնացեք ասեք բարայիս:
8. Լյուկենյան Հայկանուշ. 60 տարեկան. Տանտիրուհի. Չալթր գյուղից, ապրում է Չալթրում: Կատարել է՝ 19. Քուն եղիր, բալաս:
9. Լյուկենյան Մկրտիչ. 70 տարեկան. ուսուցիչ, Չալթր գյուղից: Կատարել է 12. Հինա զըրին և նույն եղանակի տարբերակը: (Տե՛ս ծանոթագրություն 12) 17. Օրոր, 20. Հավի չիվ. 21. Պուք կուկա, 32. Գըլզըմ Խաչերես, 37. Օդայ ու Իստիր մարերը, 45. Մա. բիամ մորաքույր, 46. Գնչունական եղանակ (Յինգան հավա), 47 Կատակ պար, 76 Մեծ մամա և 57, 58, 59, 60, 61, 63, 64, 83 պարեղանակները:
10. Լյուկենյան Ռուբեն. 65 տարեկան. պաշտոնյա, Չալթր գյուղից, ապրում է Չալթրում: Կատարել է 24. Երեք օրվան լուսնի նման, 10. Քունն էգիլ է, 26. Արդու Խամբեր (Աբուշան) 29. Հաքա հարսը, 31. Հենդեքն ինգա. 34. Դըմբըլըդին Բարուքը, 38. Խարիր Մելքոն, 39. Շարեցին մորքուր, 42. Քսանմեզա զոխեցի:
11. Խալաբաշյան Մանուկ. 74 տարեկան, Զուռնաչի. Թոպտի գյուղից, ապրում է Թոպտում: Կատարել է 65, 66, 67 պարեղանակները:
12. Խաթենկյան Սերունի. 83 տարեկան, Չալթր գյուղից, կատարել է 31. Հենդեքն ինգա եղանակի տարբերակը: (Տե՛ս ծանոթագրություն 31):
13. Խաղաղավազյան Խաչատուր. 67 տարեկան, զուռնաչի Չալթր գյուղից, ապրում է Չալթրում: Կատարել է 1. 2. Հարսանեկան Նախանվազ Ա, Բ, 4. Հարսին հոր տնից դուրս բերելու եղանակ, 6,8,9, Մոմ խաղցնելու եղանակ (Ա. Գ, Դ), 13. Փեսային ճանապարհելու եղանակ (Ճանապարհ):
14. Ունան, 55, 56, 77, 78 պարեղանակները, 90. Ասեցի, 92. էլմաս, 93. Անոսյան, 94. Խրիմ քեսէ 95 Խոշաֆ Թասին, 96 Խանազար և 98 Ղուկաս աղային հավան:
14. Խուռդայան Ավետիս. 42 տարեկան, ուսուցիչ, Չալթր գյուղից: Կատարել է՝ 71. Խայթարմա Մյասնիկավանի:
15. Կապանեակով Դրիգոր, 50 տարեկան, թեորետիկ կոմպոզիտոր, Նոր Նախիջևանից, ապրում է Ռոստովում: Կատարել է 72, Զիարշավի եղանակ (Խոլիի հավա), 73 Հարուր մեկ և 75. Քամամ:
16. Մաղոյան Գասպար. 58 տարեկան, պաշտոնյա, Չալթր գյուղից, ապրում է Ռոստովում: Կատարել է 28. Փողասեր երիտասարդի երգը:
17. Ջուրաշյան Մարտիրոս. 73 տարեկան, կոլտնտեսական, Չալթր գյուղից, ապրում է Չալթրում: Կատարել է՝ 101. Խոխոին Հաճիմային հավան:
18. Պոպով Հովհաննես. 73 տարեկան, անասնաբույժ, Ն. Նախիջևանից, ապրում է Ռոստովում: Կատարել է 30. Սամավարի երգը:
19. Ջալաշյան Գևորգ. 70 տարեկան, տնտեսագետ Չալթր գյուղից. ապրում է Չալթրում: Կատարել է՝ 11. Լուսն ալ լուսացավ, 14. Փոքր Ավեդիս, 15. Մեծ Ավեդիս, 27. Մուլլ աղչկա երգը:
20. Տաղլայան Աստվատուր, 30 տարեկան, ինքնագործ փողային նվագախմբի ղեկավար, Չալթր գյուղից, ապրում է Չալթրում: Կատարել է 30. Արիցեք ղղաք, 69 և 81 պարեղանակները, 87. Հին Խրիմ և 88. Մովսես:
21. Տեր-Հակոբյան Մկրտիչ. 40 տարեկան. ուսուցիչ. Չալթր գյուղից:

- կատարել է 86. Թոալ աղավնյակս:
22. Յլսլայան Եղիա. 60 տարեկան, ավտովարորդ, Ձալ-
լըր գյուղից, կատարել է 3. Հարսանեկան նա-
խանվազ: Դ:
23. Փոբֆշեյան Խաչեհետ. 76 տարեկան, պատմաբան-
ֆուկլորիստ. Թոպտի գյուղից. ապրում է Ռոստո-
վում:
- կատարել է 16. Ախլա տանտան, 23. Բադիս
Դազը նստեյի. 43. Բայձառ քաղաք:
24. Փոբֆշեյան Մկրտիչ. 48 տարեկան սիրող նկարիչ,
չութակահար, Ձալթր գյուղից:
- կատարել է 51 և 52 սլարեղանակները:

25. Փոբֆշեյան Սիմոն. 33 տարեկան. հարմոնահար ու-
սուցիչ, Ձալթր գյուղից, ապրում է Ձալթրում:
- կատարել է 5. Հարսին հոր տնից դուրս բերելու
եղանակ Բ. 91. Սալամ Գարապետ և 32. Խարիբ
Մեկքոն եղանակի տարբերակը: Տե՛ս ծանոթա-
գրություն 38:
26. Փուռեյան Գևորգ. 57 տարեկան. զուռնաչի,
Ձալթր գյուղից, կատարել է 7. Մոմ խաղցնե՛ու
եղանակ, Բ. 10. Զուլթեկեմե, և 89. Պաղ ու պաղ-
չա: